Ուսուցիչների պետական պարտադիր

վերապատրաստման

դասընթաց 2023

Վերապատրաստող կազմակերպություն

«Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց »

ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Շերտավորված ուսուցումը մայրենիի և մաթեմատիկայի դասաժամերին

Ղեկավար՝ Աննա Յայլոյան Վոլոդյայի

_____

Կատարող՝ Իրինա Մելքոնյան Կարուշի

_____

<<ԳՅՈՒՄՐՈՒ №19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ, ԴԱՍՎԱՐ

ԳՅՈՒՄՐԻ 2023Թ.

Բովանդակություն

Ներածություն----------4

Շերտավորված ուսուցումը մայրենիի և մաթեմատիկայի դասաժամերին

1.Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները----------6

2. Աշխատանքի ձևերն ու մեթոդները----------16

Եզրակացություն----------26

Օգտագործված գրականության ցանկ----------28

Ներածություն

Ուսուցումը համակարգված կրթություն ստանալու ամենակարևոր և վստահելի միջոցն է:

Լինելով երեխայի գիտակցության մեջ առկա իրականություն՝ ուսուցումը ոչ այլ ինչ է, քան մանկավարժի կողմից ղեկավարվող ճանաչման առանձնահատուկ գործընթաց: Հենց ուսուցչի ուղղորդիչ դերն է ապահովում դպրոցականի կողմից գիտելիքների, ունակությունների և հմտությունների լիարժեք յուրացումը, նրանց մտավոր ուժերի և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

<u>Հետազոտության արդիականությունը.</u>

Շերտավորված ուսուցման դերն այսօր կարևորվում է ժամանակակից դասին

ներկայացվող պահանջների համակարգում՝ մեծապես նպաստելով դիդակտիկական գործընթացի արդյունավետ կառավարմանը: Այս գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը մշակում, դարձնում է դյուրահաս ու մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար:

Հետազոտության ***նպատակն*** է բացահայտել շերտավորված ուսուցման դերն ու առանձնահատկությունները կրտսեր դպրոցականների զարգացման գործում:

Այս ամենի համար հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ երեխայի բնական տարիքային պահանջմունքները (ճանաչման, հաղորդակցման,գործունեության)

բավարարվեն: Ներկայումս բավականին արդիական է շերտավորված ուսուցումը,քանի որ յուրաքանչյուր երեխա, անկախ իր ընդունակություններից և

կարողություններից, ուսումնական գործընթացում զբաղվում է իր

ընդունակություններին համապատասխան աշխատանքով, դառնում է ավելի ինքնավստահ, վայելում է ուսման նկատմամբ բերկրանք, ապրում է զարգացում:

Հետազոտության **խնդիրներն** են՝

ա. Ուսումնասիրել խնդրո առարկային վերաբերող մանկավարժական, մեթոդական գրականությունն ու վերլուծել շերտավորված ուսուցմանը վերաբերող մանկավարժական մոտեցումները

բ. Կարևորել շերտավոր մոտեցումը կրտսեր դպրոցականների զարգացման գործումգ. Մշակել շերտավոր ուսուցման արդյունավետ մեթոդներ

Ուսուցումն, ինչպես ցանկացած այլ գործընթաց, կապված է շարժման հետ: Այն ինչպես և ամբողջական մանկավարժական գործընթաց ունի խնդրային կառուցվածք, և, հետևաբար, ուսուցման գործընթացում, շարժումը գնում է մի խնդրի լուծումից դեպի մյուս խնդրի լուծում՝ տանելով աշակերտներին ճանաչողության ճանապարհով՝ անիմացությունից դեպի իմացություն, ոչ լրիվ գիտելիքներից դեպի ամբողջական և հատուկ գիտելիք:

Այս ճանապարհը շատ բարդ է ու դժվարին, ուստի ուսուցման գործընթացը չի կարելի պատկերացնել առանց շերտավորված ուսուցման: Այս հետազոտական աշխատանքում ներկայացված է ուսուցման շերտավորման առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական պրոցեսում անհատական աշխատանք օժտված աշակերտների հետ, աշխատանքի ձևերն ու մեթոդները:

Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է այդ համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող անձի ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Այդ պահանջը ենթադրում է այնպիսի կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ հաշվի է առնվում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները: Այս պարագայում աշակերտը հնարավորություն է ունենում իրեն լիարժեք դրսևորելու, ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու:

Ուսումնական գործընթացում մի շարք կրթական խնդիրների լուծման համար արդյունավետ է կիրառել **շերտավորված ուսուցում**, որի դերն այսօր կարևորվում է ժամանակակից դասին ներկայացվող պահանջների համակարգում՝ մեծապես նպաստելով դիդակտիկական գործընթացի արդյունավետ կառավարմանը:

1. Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները

Շերտավորված ուսուցման հիմքում ընկած է անհատական ուսուցման գաղափարը: Այն պահանջում է ուշադիր լինել ոչ միայն այն աշակերտների նկատմամբ, ովքեր ուսման մեջ հետ են մնում, այլև՝ նրանց, ովքեր աչքի են ընկնում մտավոր զարգացման բարձր մակարդակով, այս կամ այն ուսումնական առարկայի նկատմամբ ցուցաբերում են խոր հետաքրքրություններ և ընդունակություններ: Շերտավորված ուսուցումը խնդիր է դնում հայտաբերել այն պայմանները, որոնք կարող են ապահովել բոլոր աշակերտների մտավոր ընդունակությունների առավելագույն և համակողմանի զարգացումը և այն պայմանները, որոնք կարող են ապահովել աշակերտների հետագա բնական զարգացումը:

Շերտավորված ուսուցման նպատակն է կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովելով պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Շերտավորված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի ատհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացմանը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Շերտավորված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխայի ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Շերտավորումը բնորոշվում է այնպիսի խմբերի ստեղծումով , որտեղ գործունեությոն նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Շերտավորված ուսուցում ասելով չպետք է հասկանալ միայն այն առարկաների խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը, որոնց ուղղությամբ կազմակերպվում է ուսուցումը, այլ ուսուցման այս ձևը ենթադրում է ուսումնական ծրագրերի սահմաններում սովորողներին յուրացնել տալ գիտելիքների նվազագույնը և ապա դրանից դուրս ավելի հիմնավոր և ավելի խոր ուսումնասիրել տալ այն առարկաները, որոնց նկատմամբ դրսևորումմ են հակումներ, հետաքրքրություններ և մտավոր ընդունակություններ: Չի բացառվում, որ աշակերտներն ուսումնասիրեն նաև այնպիսի առարկաներ, որոնք չեն մտնում ուսումնական պլանի մեջ:

Թեքումով դպրոցներ, խորացված դպրոցներ, խորացված դասարաններ: Օրինակ, արտասահմանյան լեզուների թեքումով դպրոցներում աշակերտները խորացված ուսումնասիրում են անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն և այլ լեզուներ: Թեքումով դպրոցը կոչվում է տվյալ առարկայի անունով:

Խորացված դպրոցներում աշակերտները խորացված ուսումնասիրում են մեկ, երկու առարկա: Օրինակ, հայոց լեզու և գրականություն կամ կենսաբանություն և քիմիա և այլն:

Խորացված դասարաններում (տվյալ դպրոցի) աշակերտները բազմակողմանիորեն ուսումնասիրում են որևէ առարկա:

Ֆակուլտատիվներում, ատադասարանային խմբակներում աշակերտները խորացված ուսումնասիրում են այս կամ այն առարկան, իմչպես նաև գիտությունների այլ բնագավառներ:

Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչները շերտավորված ուսուցումն իրականացնում են նաև տվյալ դասի ընթացքում՝ նախապես իմանալով դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունները, ընդունակությունները: Շերտավորվում են նրանց տրվող առաջադրանքները:

Շերտավորված ուսուցման փորձը և այդ ուղղությամբ կատարվող հետազոտությունների արդյունքները հաստատել են, որ որևէ առարկայի խոր ուսումնասիրությունը աշակերտների գիտելիքները հարստացնում է ոչ միայն տվյալ

և հարակից առարկաներից, այլև մյուս առարկաներից ու զգալիորեն բարձրացնում է ուսման առաջադիմությունն ընդհանրապես: Ուսումնական գործունեությունը նրանց համար դառնում է ամենօրյա պարտադիր աշխատանք: Նրանք կարդում են լրացուցիչ գրականություն, աշխատում են սկզբնաղբյուրների վրա, հավաքում նոր փաստեր ու տվյալներ, ձգտում են ձեռք բերած գիտելիքները վերածել համոզմունքների, մշակում են իրենց հայացքները, ձևավորում գիտական աշխարհայացք: Շերտավորված ուսուցման միջոցով կարելի է պարտադիր ծավալով գիտելիքներ տալ բոլոր սովորողներին ու միաժամանակ ընդլայնել ու խորացնել նրանց գիտելիքները գիտության, տեխնիկայի, արվեստի և այլ բնագավառների: Նշանակում է՝ շերտավորված ուսուցումը սովորողների մեջ նոր հետաքրքրություններ, նոր նախասիրություններ խթանելու միջոց է: Այն հետապնդում է երկու գլխավոր նպատակ. առաջին՝ առավել չափով զարգացնել սովորողների այս կամ այն առարկայի գծով ցուցաբերած հակումներն ու ընդունակությունները, երկրորդ՝ ի հայտ բերել աշակերտների՝ իրենց գործունեության տարբեր տեսակների նկատմամբ ունեցած ընդունակությունների կառուցվածքային բաղադրամասերը և դրանց հիման վրա օգնել նրանց ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Վերը շարադրածներից պարզ է դառնում, որ շերտավորված կամ տարբերակված ուսուցումը հենվում է սովորողների մտավոր ընդունակությունների վրա: Այն սովորողների մտավոր ընդունակությունների կառուցվածքային տարրերը հայտնբերելու և զարգացնելու կարևոր միջոց է:

Արտասահմանյան երկրներում շերտավորված ուսուցման հիմքում ընկած են մի շարք փիլիսոփայական ուղղություններ, որոնք պնդում են, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ի ծնե կենսաբանական գործոնով: Ահա, ելնելով այս հայեցակարգից, որոշ գիտնականներ դիմում են ամեն միջոցի՝ բացահայտելու մտավոր օժտվածություն ունեցող երեխաներին: Այդ նպատակով առաջին հերթին կիրառում են տեստը: Ուսուցման շերտավորումն ըստ տեստի, օգտագործում են Արևմուտքի շատ երկրներում որտեղ երբ երեխաները դեռ նոր են

ոտք դնում դպրոցի շեմին, տեստերի միջոցով նրանց, ըստ ցուցաբերած ընդունակության բաժանում են խմբերի: Առաջին երկու խմբերը համարվում են ավելի ընդունակների խմբեր, որոնց հետ ուսուցումը տարվում է ինտենսիվացված եղանակով, իսկ մյուս խմբերի հետ այնքանով, որքանով նրանք ձեռք կբերեն տարրական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման շերտավորմանը շատ բանով կարող է օգնել մեթոդիկաների կատարյալ համակարգերի ստեղծումը, որը հնարավորությունն կընձեռի, ըստ պարամետրերի ստնալ մտավոր զարգացման առավել ճիշտ տվյալներ

Շերտավորված ուսուցումն իրականացվում է երեք հիմնական փուլերով.

1. Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները :
2.Խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների;
3. Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Այդ գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը մշակում, դարձնում է դյուրահաս ու մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար: Նմանօրինակ մոտեցումը նպաստում է նաև դասարանի համընդհանուր ակտիվացմանը. յուրաքանչյուր աշակերտ իր անելիքն է ունենում:

Երբ ուսումնական գործընթացում ուսուցիչն ամբողջ դասարանի առջև դնում է միևնույն առաջադրանքի կատարման պահանջ՝ հաշվի չառնելով աշակերտների անհատական-հոգեբանական կարիքները, ապա նա չի ապահովում որակյալ կրթություն, այն է՝ օգնել յուրաքանչյուր աշակերտի առաջ շարժվել ըստ իր ընդունակությունների և կարողությունների: Այս կարևոր գործոնի անտեսումը հանգեցնում է նրան, որ աշակերտը չի հաղթահարում իր առջև ծառացած դժվարությունները. արդյունքում՝ ընկնում է նրա ինքնագնահատականը և նվազում է հետաքրքրությունն ուսման նկատմամբ:

Հետևաբար, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական գործընթացում զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով, նույն դասարանի տարբեր աշակերտների համար ուսումնական ծրագրի միևնույն

պահանջի համար նախատեսվեն տարբեր աշխատանքներ: Այս դեպքում, կարծում ենք, աշակերտը կդառնա ավելի ինքնավստահ, կվայելի ուսման նկատմամբ բերկրանք ու զարգացում կապրի:

Շերտավորումը չպետք է դառնա աշակերտներին պիտակավորելու միջոց: Ուղղակի յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր կարողություններին համարժեք ծավալի աշխատանք: Շերտավորված ուսուցումն ունի և՛ իր դրական, և՛ բացասական կողմերը:

Դրականներից են. ուժեղ սովորողները հնարավորություն են ունենում իրենց զարգացման մեջ, առաջընթաց ապրել, նրանք ավելի ինքնուրույն են դառնում, մոտիվացվում են ուսման նկատմամբ: Նաև հնարավորություն է ստեղծվում ուշադրություն դարձնել հետ մնացողներին և ստուգել նրանց, բարձրանում է թույլ աշակերտի ինքնագնահատականը:

Բացասական կողմերից են, որ թույլերը հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին այս խմբերում նվազում է ուսման շարժառիթը:

Տարբերակում ենք շերտավորման երկու տեսակ՝

Արտաքին, որի մասին արդեն խոսվեց վերևում, դրանք հատուկ դպրոցները կամ դասարաններն են, որտեղ ընդգրկվում են որոշակի անհատական ընդունակություններով օժտված աշակերտներ /հակում՝ որևէ առարկայի նկատմամբ, ուսման բարձր առաջադիմություն, հումանիտար կամ բնագիտամաթեմատիկական թեքումով դասարաններ և այլն/.

Ներքին, որը սա ենթադրում է դասարանի ներսում որոշակի խմբերի կազմավորում, որտեղ աշխատում են քիչ թե շատ նման կարիքներ և ընդունակություններ ունեցող աշակերտներ:

Շերտավորված ուսուցումն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը՝

1. որոշակի չափանիշներ, որոնց համապատասխան կատարվում է խմբերի առանձ-նացում.

2. կոնկրետ չափանիշների հիման վրա հայտորոշիչ աշխատանքների իրականացում.

3. շերտավորված առաջադրանքների մշակում.

4. շերտավորված ուսուցման իրականացում դասի տարբեր փուլերում.

5. հայտորոշիչ ստուգում, որի արդյունքում կարող են փոխվել խմբերի կազմը, շերտավորված առաջադրանքների բնույթը և այլն:

Ուսուցման շերտավորումը հետապնդում է անհատականացման միջոցով կատարելագործել աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, նպաստել ուսումնական ծրագրերի պահանջների իրականացմանը, յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացմանը, խորացնել և ընդլայնել աշակերտների գիտելիքները՝ ելնելով նրա հետաքրքրություններից և ընդունակությունների առանձնահատկություններից, ինչպես նաև ձևավորել և զարգացնել տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը:

Շերտավորված ուսուցում իրականացնող ուսուցիչը պետք է ունենա հստակ պատկերացում այն մասին, թե ինչ նպատակով, որ դասերի ընթացքում և ինչպես նա պետք է կիրառի այն:

Նա պետք է կարողան կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են երեխաների մոտ ի հայտ գալ նոր նյութի յուրացման և տարբերակված առաջադրանքների կատարման ընթացքում: Նա պետք է հմտորեն մշակի սովորողներին խմբերի բաժանման չափանիշները: Կարողանա դասերի ընթացքում անհատական և խմբային առաջադրանքներ կիրառել: Նա պետք է նկատի և խրախուսի աշակերտի՝ մի խմբից անցումը մյուս խումբ, այսինքն՝ ուսուցիչը պետք է կարողանա տեսնել աշակերտի աճը, անընդհատ վերլուծի անհատական և շետավորված ուսուցման արդյունավետությունը՝ նշելով առաջընթացն ու դժվարությունները: Հստակ պատկերացում ունենա այն մասին, թե ինչպես պետք է շարունակի աշխատանքը հետագա դասերի ընթացքում, այսինքն՝ կարողանա պլանավորել սովորողների հետագա գործունեությունը և մի շարք այլ հարցեր:

Այսպիսով, ուսուցման անհատականացում և շերտավորում իրականացնող ուսուցչի առջև ծառանում են հետևյալ հարցերը. ինչպես շերտավորել աշակերտներին, ինչ չափանիշներով գնահատել նրանց առանձնահատկությունները, ինչպես որոշել նրանց զարգացման մեկնարկային մակարդակը, ինչպես նաև՝ որոշակի աշակերտների հետ աշխատանքի որ ուղղությունները կլինեն առավել կարևոր և այլն:

Ուսումնական գործընթացում շերտավորված ուսուցումը ենթադրում է աշակերտներին դիտարկել նույնանման կարիք ունեցող խմբերում՝ ըստ ուսումնառության մակարդակների՝ հաշվի առնելով նրանց անհատական ընդունակությունները, պատրաստականության մակարդակը, ուսումնաճանաչողական գործունեության նկատմամբ ունեցած շարժառիթը և այլն:

Աշխատանքն ավելի ակնառու դարձնելու նպատակով, հարկ ենք համարում ներկայացնել պայմանականորեն բաժանված աշակերտների հետևյալ 3 /4/ խմբերը.

3-րդ մակարդակում այն երեխաներն են, ովքեր առանց դժվարության ընկալում են ուսումնասիրվող նյութը, առանձնացնում են գլխավորը, էականը, օրինաչափը, մասնավորում տեսնում են ընդհանուրը, ինքնուրույնաբար կարողանում են բացահայտումներ կատարել, ստացած գիտելիքները գործադրել նոր իրավիճակներում, կարճ ժամանակում հասնել գիտելիքների բարձր մակարդակի:

Բոլոր առաջադրանքները, նույնիսկ ձևափոխված, կամ ոչ ստանդարտ, կատարում են ինքնուրույն, ճիշտ են օգտագործում իրենց փորձը: Կարողանում են իրենց գործողությունները մեկնաբանել, բառային բնութագրումներով ներկայացնել, իսկ սա վկայում է, որ նրանք ուսումնական ծրագրային նյութը յուրացրել են գիտակցված: Նրանք իրենց գիտելիքները հաջողությամբ կիրառում են գործնականում: Ավելի բարդ առաջադրանքները կատարելու համար, նրանց ոչ միշտ է հարկավոր է լինում ուսուցչի ուղղորդումը:

Երրորդ խմբի աշակերտներն ավելի արագ են մտապահում հմտությունների և առաջադրանքների լուծման եղանակները: Համարյա կարիք չի լինում կիրառելու այս կամ այն դիդակտիկ պարագան կամ զննական միջոցը: Նրանց համար բավական են բա-

ռային ցուցումները և հիշեցումներն այս կան այն դիտարկումների կամ երևույթների վերաբերյալ, որոնք նրանք արդեն գիտեն:

3-րդ կարգի բարդության առաջադրանքները կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն կամ դժվարավուն առաջադրանքները կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, բացթողում: Առաջադրված բոլոր հարցերին /անգամ ոչ ստանդարտ /տալիս է լիարժեք պատասխաններ, հաշվարկները կատարում է արագ, անսխալ՝ օգտագործելով հաշվարկման արդյունավետ եղանակներ. կարողանում է կատարել 3-րդ կարգի բարդության առաջադրանքները, ինքնուրույն կազմել լուծման քայլաշարը և լուծել՝ բացատրելով կատարված գործողությունները, կարողանում է տրված առաջադրանքը կատարել նաև այլ եղանակներով /եթե դա հնարավոր է/: Կռահունակություն պահանջող և տրամաբանական բնույթի առաջադրանքները կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն:

Ունի անցած գիտելիքների հիմնավոր իմացություն և այն կարողանում է հմտորեն կիրառել: Բանավոր խոսքը զարգացած է և տրամաբանված: Բարդ առաջադրանքները կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական սխալ կամ վրիպում, որը ուշադրություն հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացանելու): Ազատորեն մեկնաբանում է դասանյութը, ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ անում, համադրում է տարբեր առարկաներից ունեցած գիտելիքները, դրանք դասակարգում:

2-րդ մակարդակում այն աշակերտներն են, որոնք նյութը յուրացնում են մարզողական աշխատանքներից հետո, էականը, օրինաչափը անմիջապես չեն կարող առանձնացնել, որոշակի վարժողական աշխատանքից հետո նոր տեսնում են մասնավորի մեջ ընդհանուրը: Գիտելիքների յուրացման համար ավելի շատ ժամանակ է պահանջվում:

Նրանք համընդհանուր ուսումնական գործունեություն պայմաններում ըմբռնում են ուսուցչի բացատրությունները, հիշում և մտապահում են ուսումնասիրվող նյութը, սակայն չեն կարողանում ինքնուրույն կատարել տարրական եզրահանգումներ և

ընդհանրացումներ: Նրանք ունեն ուսուցչի կարիքը, ինչպես կազմակերպական, այնպես էլ ակտիվանալու հարցերում, դժվարանում են իրենց գիտելիքը կիրառել անսովոր իրավիճակներում: Իսկ սա իջեցնում է նրանց աշխատանքի տեմպը: Կարող են թույլ են տալ սխալներ, սակայն աննշան օգնության դեպքում դրանք ուղղում են և շտկում: Երկրորդ խմբի աշակերտներն իրենց կատարած գործողությունների համար չեն կարողանում տալ հստակ բացատրություններ, չեն պատկերացնում այն երևույթները, առարկաները, փաստերը, որոնց մասին իրենց հաղորդվում է: Նրանք միայն անմիջական դիտարկումների ներքո են ըմբռնում քանակական հարաբերությունները, բազմություններում՝ փոփոխությունները, մեծությունների միջև եղած առնչությունները և այլն:

1-ին մակարդակում գտնվող աշակերտները նյութը յուրացնում են բազմակի վարժություններ կատարելուց հետո, դժվարանում են էականի առանձնացման մեջ, անգամ ամբողջ դասարանի հետ ընդհանուր վարժողական աշխատանք կատարելուց հետո, հիմնականում կատարում են վերարտադրողական առաջադրանքներ, գիտելիքները յուրացնում են շատ երկար ժամանակահատվածի մեջ: Համընդհանուր բացատրությունները նրանց համար հասկանալի չեն, և կարիք է զգացվում լրացուցիչ բացատրությունների: Պակասում է ինքնուրույնությունը, ուսումնական նյութի յուրացման մակարդակը ցածր է:

Այս խմբի աշակերտներն ուսումնական գործընթացում ինչ-որ չափով կարողանում են հաղթահարել պասիվությունը: Հիմնականում նրանք օգնության կարիք ունենում են առաջադրանքի կատարման սկզբում, այնուհետև կարող են ինքնուրույն կատարել, մինչև նոր դժվարության առջև կանգնելը:

Նրանք դժվարանում են ընկալել կապերը,հարաբերությունները, պատճառա-հետևանքային կախվածությունը, չեն գիտակցում քանակական փոփոխությունները /քիչ է, շատ է/, առավել ևս դժվարանում են դրանք ներկայացնել: Իրենց ուժերը կենտրոնացնում են միայն նյութը մտապահելու վրա՝ հիշողության մեջ ամրագրելով առանձին փաստեր, պահանջներ, ցուցումներ՝ առաջադրանքների կատարման համար: Սակայն այս

գործողությունները կատարում են առանց անհրաժեշտ գիտակցման՝ խախտելով եզրահանգումների տրամաբանական շղթան, իմացական և իրական դեպքերի օրինաչափությունները, միմյանց հետ խառնելով երևույթների էական ու անէական հատկանիշները: Առաջադրանքներ կատարելիս նրանք հիմք են ընդունում ոչ էական հատկանիշներ, առանձին բառեր կամ արտահայտություններ:

Զարգացած չէ խոսքը, տեղին չեն օգտագործում եզրույթները, եթե նույնիսկ անգիր վերարտադրում են, ապա չեն պատկերացնում ասվածի էությունը:

Առաջադրանքները կատարելիս չեն կարողանում ներկայացնել իրենց աշխատանքի ընթացքը, զուրկ են ինքնաստուգում կատարելու կարողությունից:

Չորրորդ խումբը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներն են /ԿԱՊԿՈՒ/, որոնց ուսուցումը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանների /ԱՈՒՊ/ օգնությամբ:

Այս խմբում ընդգրկված աշակերտներն ուսումնական նյութը յուրացնում են շատ ցածր մակարդակով: Համընդհանուր ուսուցումը նրանց համար չէ: Նրանք կարիք ունեն օժանդակ ուսուցման /հեշտացված առաջադրանքներ, մշտական ստուգում, առաջադրանքի կատարում՝ ուղեկցվող բացատրություններով և հուշումներով/: Նույնիսկ ուսուցչի անմիջական օգնության դեպքում աշակերտների մի մասը կարող է առաջ գնալ, իսկ մյուս մասը՝ դեռևս կարող է թույլ տալ սխալներ: Այս աշակերտները չեն տեսնում իրենց սխալները, հարկավոր է նրանց ուշադրությունը հրավիրել դրանց վրա և տալ բացատրություններ՝ դրանք ուղղելու համար: Յուրաքանչյուր առաջադրանք, եթե նույնիսկ նրանք այդ տեսակից արդեն կատարել են, ընկալվում են որպես նոր: Գիտելիքները յուրացնում են մեխանիկորեն և արագ էլ մոռանում են: Նրանց հարկավոր է հաղորդել գիտելիքների համեմատաբար քիչ ծավալ, քան նախատեսում է առարկայական ծրագիրը:

Շերտավորված ուսուցման ժամանակ կարևորվում է հետադարձ կապը: Հայտորոշիչ ստուգում անցկացնելուց հետո կատարվում է աշխատանքների վերլուծություն: Արդյունքում որոշակիացվում է յուրաքանչյուր սովորողի զարգացման աճը, որին համապատասխան էլ փոխվում է խմբերի կազմը և շերտավորված առաջադրանքների բնույթը:

2. Աշխատանքի ձևերն ու մեթոդները

Ըստ ուսումնական գործունեության կազմակերպման ձևի շերտավորումը կարող է լինել՝

- անհատական/ ինքնուրույն/
- զույգերով
- խմբային

Սովորաբար կարող են կիրառվել նաև միմյանց հետ զուգակցվող շերտավորման տարբեր ձևեր:

Խմբայինի դեպքում յուրաքանչյուր խմբի աշակերտներ քննարկում և միասին են լուծում տրված առաջադրանքը: Դասի վերջում սովորողների աշխատանքները հավաքվում են և ստուգվում ուսուցչի կողմից՝ ենթարկվելով համընդհանուր քննարկման:

Սակայն ուսումնական գործունեության խմբային ձևը կազմակերպական դիտանկյունից մի շարք դժվարություններ է առաջացնում: Առաջինը՝ հենց դասարանը խմբերի բաժանելն է: Խոսքը վերաբերում է ոչ թե ուղղակի, այլ՝ նպատակային բաժանմանը, այն է՝ ըստ զարգացման մակարդակների և ըստ ուսման առաջադիմության: Սակայն իր դժվարությունների հետ մեկտեղ այն շատ դրական կողմ էլ ունի. նպաստում է խմբերում սովորողների շփմանը: Ուժեղ սովորողներն սկսում են պատասխանատվություն կրել թույլերի համար, քանի որ ուսուցիչը պատասխան կարող է պահանջել խմբի ցանկացած աշակերտից:

Խմբային գործունեության ձևը հարմար է օժտված աշակերտների հետ աշխատանքները կազմակերպելիս կամ այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Խմբային աշխատանքի արդյունքը պայմանավորված է ոչ միայն յուրաքանչյուր աշակերտի, այլև խմբի անդամների միջև համաձայնության գալու մակարդակներով:

Ուսումնական գործընթացը կարելի է շերտավորել հետևյալ ձևերով.

Ըստ ուսումնական առաջադրանքների բովանդակության՝

- վերարտադրողական

- ստեղծագործական
- ըստ դժվարության
- ըստ ծավալի

Վերարտադրողական բնույթի՝ ծանոթ առաջադրանքներ, ուսումնասիրած առաջադրանքների լուծում, հաշվողական հմտությունների կիրառմամբ առաջադրանքներ, լուծում՝ ըստ նմուշ օրինակի, լրացուցիչ բացատրություններով, նկարների օգնությամբ և այլն:

Ստեղծագործական բնույթի՝ օրինաչափություններ, մաթեմատիկական օբյեկտների դասակարգում, պակասող տվյալներով առաջադրանքներ, տարբեր եղանակներով խնդիրների լուծում՝ ամենառացիոնալ տարբերակի ընտրությամբ, ինքնուրույն խնդիրների կազմում, մաթեմատիկական արտահայտությունների, հավասարությունների և անհավասարությունների կազմում, ոչ ստանդարտ բնութի առաջադրանքներ և այլն:

Ըստ դժվարության՝ ուսումնական նյութի բարդեցում տվյալ առաջադրանքում, առաջադրանքներում կամ խնդիրներում կատարվող գործողությունների ավելացում, հակադարձ խնդիրների կազմում, լրացուցիչ առաջադրանքներ, որոնք կլրացնեն հիմնականին, տառերի՝ թվային արժեքների կիրառում՝ համապատասխան արտահայտությունների փոխարեն, օրինաչափությունների կռահում կամ կազմում և այլն:

Ըստ ծավալի՝ առաջադրանքներն ըստ ծավալի շերտավորելու անհրաժեշտությունն առաջանում է, երբ սովորողներն աշխատում են տարբեր տեմպերով /հիմնական առաջադանքներ՝ 1-ին խումբ, լրացուցիչ առաջադրանքներ՝ 2-րդ և 3-րդ խմբեր/:

2-րդ և 3-րդ խմբի առաջադրանքները կապվում են հիմնական առաջադրանքի հետ, սակայն ավելի բարդ են /տրամաբանական, ստեղծագործական/:

Այս դեպքում աշակերտները ծրագրային նյութի շրջանակում կատարում են միևնույն առաջադրանքները, իսկ աշխատանքը շերտավորվում է ըստ ծավալի:

Այս փուլում կազմակերպվող աշխատանքներին ներկայացվող պահանջներն են՝

- չանցնել լրացուցիչ առաջադրանքների, եթե աշակերտը հիմնականը դեռ չի վերջացրել.

- լրացուցիչ առաջադրանքների կատարումը պարտադիր չէ, ուստի աշակերտն այն կարող է կատարել մասնակիորեն.
- եթե կատարվում է հիմնական առաջադրանքի համընդհանուր ստուգում, ապա աշակերտները պետք է դադարեցնեն լրացուցիչ առաջադրանքների շուրջ իրենց աշխատանքը և լսեն ուսուցչի բացատրությունները:
- լրացուցիչ առաջադրանքներին կարելի է անդրադառնալ դասի մյուս փուլերին:

Միևնույն առաջադրանքը կատարելու պայմաններում, երբ կիրառվում են ուսումնական տարբեր գործունեություններ, շերտավորում են սովորողների աշխատանքը ըստ՝

- ինքնուրույն աշխատելու կարողության
- ցուցաբերվող օգնության մակարդակով և բնույթով
- ուսումնական աշխատանքների բնույթով

Շերտավորման նպատակով դասդասված առաջադրանքները ներկայացվում են տարբերակներով՝

I տարբերակ – հիմնական առաջադրանք

II տարբերակ – առաջադրանք ավելի մեծ ծավալով

III տարբերակ–ստեղծագործական առաջադրանք

Այս առաջադրանքները անմիջականորեն պայմանավորված են ընկալման երեք մակարդակներով :

Աշակերտն ինքն է ընտրում այն առաջադրանքը, որը ցանկանում է կատարել: Եթե նա սխալվել է իր ընտրության մեջ, ապա կարող է փոխել իր առաջադրանքը: Կամ առաջին տարբերակը հաղթահարելուց հետո, կարող է փորձել նաև մյուս տարբերակների առաջադրանքները:

Ահա առաջադրանքների համախմբերի օրինակներ՝ ուսուցման շերտավորման նպատակով:

1. Ջ. Ռոդարի <<Պապիկը, որը չէր կարողանում հեքիաթ պատմել>>:

Առաջադրանքի նպատակն է զարգացնել ստեղծագործելու և վերարտադրելու կարողությունը:

I մակարդակ

Պապիկի շփոթեցնող մտքերից ո՞րը քեզ դուր եկավ:

II մակարդակ

Վերարտադրի՛ր այն տողերը, որոնք համընկնում են քեզ քաջ ծանոթ հեքիաթի բովանդակությանը:

III մակարդակ

Գրի՛ր և ներկայացրու՛ մի նմանատիպ պատմություն, որտեղ աղավաղված կլինեն դեպքերը:

2. <<Մխիթար Հերացին ու տակառագործը>> (ավանդություն)

Նպատակը բանավոր խոսքի զարգացումն է:

I մակարդակ

Դու ի՞նչ ես ուզում դառնալ և ինչու՞:

II մակարդակ

Ի՞նչն եք կարևորում բժշկի աշխատանքում:

III մակարդակ

Մեկնաբանի՛ր Հերացու այս խոսքերը. <<Բժշկությունը սեր է, կոչում և խիղճ>>:

3. Վ. Սարգսյան <<Հայկը և Բելը>>

Զարգացնել կարդալու տեխնիկան:

I մակարդակ

Կարդա՛ 1-ին պարբերությունը՝ ուշադրություն դարձնելով ուղղագրությանը և արտահայտիչ ընթերցանությանը:

II մակարդակ

Արտահայտիչ ընթերցի՛ր քեզ դուր եկած հատվածը:

III մակարդակ

Արտահայտիչ ընթերցի՛ր ամբողջ տեքստը:

Մաթեմատիկայից.

4. Խնդիր

I մակարդակ

Արամն ունի 25 գիրք, իսկ Կարենը՝ 4-ով ավելի: Քանի՞ գիրք ունի Կարենը:

II մակարդակ

Արամն ունի 25 գիրք, իսկ Կարենը՝ 4-ով ավելի: Քանի՞ գիրք ունեն Արամն ու Կարենը միասին:

III մակարդակ

Արամն ունի 25 գիրք, իսկ Կարենը՝ 4-ով ավելի: Աշոտն ունի այնքան, որքան Արամն ու Կարենը միասին: Քանի՞ գիրք ունեն Արամը, Աշոտն ու Կարենը միասին:

5. Պարագիծ

I մակարդակ

Գծի՛ր 16սմ և 8սմ կողմերով ուղղանկյուն:

II մակարդակ

Գծի՛ր 16սմ և 8սմ կողմերով ուղղանկյուն և հաշվի՛ր դրա պարագիծը:

III մակարդակ

Գտի՛ր քառակուսու կողմի երկարությունը, եթե նրա պարագիծը հավասար է 16սմ և 8սմ կողմեր ունեցող ուղղանկյան պարագծին:

I մակարդակ

Հաշվի՛ր արտահայտության արժեքը և կազմի՛ր հակադարձ արտահայտությունները՝

20 - 4 60 + 9 38 – 8

II մակարդակ

Համառոտագրի՛ր խնդիրը, լրացրո՛ւ բաց թողած տվյալը և գտի՛ր պատասխանը՝

Ավտոբուսում կար 37 մարդ: Առաջին կանգառում իջավ 7 մարդ և բարձրացավ ՝ 9 մարդ: Քանի՞ մարդ եղավ ավտոբուսում:

37 – … + 9 =

III մակարդակ

/ստեղծագործական/

Շերտավորված ուսուցման ժամանակ սովորողներին ցուցաբերվում է օգնություն, որի ձևերը նույնպես տարբեր են: Դրանք լինում են **խթանող, ուղղորդող և ուսուցանող:**

Այս բարդ ու դժվարին պրոցեսում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել բոլոր աշակերտներին: Այստեղ պետք է նշել, որ օժտված երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում և մանկավարժի հատուկ որակավորում է պահանջում: Այդպիսի երեխաների հետ աշխատել սովորել կարելի է, եթե որպես կարևոր խնդիր ընդունվի մանկավարժական գործունեության այս կերպը՝ երեխայի ունեցած ընդունակությունները պահպանել, աջակցել ու զարգացնել և դրա հետ նրա անձնավորության այլ կողմերի, օրինակ՝ հուզական ոլորտի զարգացմանը չվնասելը: Ըստ Լամետրիի բնական շնորհները կանխորոշում են մարդու բոլոր որակները: Կան մարդիկ, որոնց բնությունն առատաձեռնորեն օժտել է իր բարիքներով: Սակայն եթե մեկուսացնենք մարդուն հասարակությունից, նրան չտանք կրթություն և դաստիարակություն, ապա նրա բնական կազմակերպման առավելությունները չեն կարող իրագործվել: Վարժությունների միջոցով մարդուն կարելի է սովորեցնել ինչ ասես:

Պետք է նշել, որ օժտված երեխաների հետ աշխատանքում ուսուցիչները հանդիպում են որոշ դժվարությունների: Նման երեխաները կարող են ինչպես օգնել, աջակցել ուսուցչին, այնպես էլ տարբեր խնդիրներ ստեղծել նրա համար: Այստեղ ևս պահանջվում է հատուկ մոտեցում և համկարգված աշխատանք : Տարբեր ուղղություններով իրականացվող համակարգված աշխատանքը պլանավորված ներգործությունն է՝ ուղղված օժտված երեխաների բացառիկ ընդունակությունների, կարողությունների բացահայտմնը, ինչպես նաև նրա հետագա պայմանների ապահովմանը: Ինչքան բարձր է աշակերտի մտավոր զարգացման մակարդակը, պատկերացումների և հասկացությունների պաշարը, այնքան ավելի հաջողությամբ նա առաջ կընթանա նոր գիտելիքների ուսուցման պրոցեսում: Ուսուցման դժվարությունների

հետզհետե աճը և դրանց հաղթահարմանը սովորեցնելը դրականորեն են ազդում աշակերտների զարգացման և նրանց բարոյական որակների ձևավորման վրա:

Հաճախ օժտված երեխաներին ուղեկցում են փոխհարաբերությունների դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչներն ինչպես կվերաբերվեն բոլոր մյուսներից շատ հստակ առանձնացվող երեխային: Օժտված երեխային սպառնացող մեկ այլ վտանգ է անհատական զարգացման խեղաթյուրումը: Բոլորին հայտնի են դեպքեր, երբ ամբողջ ընտանիքը համառորեն և հափշտակությամբ փառաբանում է երեխայի տղանդը: Եվ ընհանրապես օժտված երեխային շրջապատող բոլոր մեծահասակներին էլ չէր խանգարի հիշել, որ իրենց առջև նախ և առաջ երեխա է, որին անհրաժեշտ է խաղալ, նկարել, պարել, վազվզել: Իսկ եթե հանուն սեփական հեղինակության միայն շահագործենք նրա ընդունակությունները, չապրած մանկությունը հետագայում շատ հիվանդագին կարող է անդրադառնալ նրա կյանքին, ով ինչ-որ ժամանակ եղել է օժտված երեխա: Ի դեպ, ծնողների չափազանցված ակնկալիքները ստեղծագործական զարգացման համար լուրջ արգելք կարող են դառնալ: Նրանք իրենց սեփական չիրականացած հավակնություններն ու գերազանցված սպասելիքները բարձում են երեխաներին, նրանց չեն սովորեցնում պարտվել: Այդ պատճառով ամեն մի վրիպում թվում է անուղղելի, իսկ հնարավոր անհաջողության սարսափը կաթվածահար է անում իրադարձությունների զարգացումը: Լավ կլինի, որ ուսուցիչը հաճախակի և հետևողականորեն հիշեցնի ծնողներին այդ մասին:

Խնդիրը կիսով չափ լուծվում է, եթե ուսուցիչը կարողացել է տեսնել երեխայի շնորհքը, այսինքն՝ հասկացել և ճիշտ գնահատել է նրա առանձնահատկությունները: Հանճարեղ մարդկանց կենսագրություններն ուսումնասիրելով՝ շատ հեշտ կարելի է համոզվել, որ որպես կանոն՝ յուրաքանչյուրի կյանքում եղել է ինչ-որ մեկը, որը տեսել է ապագա հանճարի երևելի ընդունակությունները և հավատացել է, քանզի շատ հաճախ են լինում դեպքեր, երբ երեխաների օժտվածությունն արտահայտված չէ կամ դա թաքնված է:

Օժտվածության բնութագրումն ընդհանրական մոտեցման տեսանկյունից դա գիտելիքների պահանջմունքն է , բացառիկ ընդունակությունների և կարողությունների, երևակայության, ստեղծագործական մոտեցման դրսևորումն է, հսկայական աշխատանք, ինքնատիպ, յուրահատուկ մտածողություն, կամք և ուժ: Այս ամենին մասնակցում են ծնողները, ուսուցիչները, միջավայրն ու մասնագետները:

Օժտվածությունը մարդու բնածին առանձնահատկությունների ամբողջությունն է, որը նախադրյալ է ընդունակությունների զարգացման համար: Տարբերվում են ընդհանուր օժտվածություն և մասնավոր օժտվախություն: Լինում է նաև արտակարգ օժտվածություն, որի առկայությունը նախապայման է տաղանդի և հանճարի զարգացման համար: Օժտված երեխաներն առանձնանում են այս կամ այն բնագավառի գիտելիքների խորը իմացությամբ, իրենց մտածողությամբ, հուզակամային վարքագծային որակներով, բացառիկ կարողություններով, մեծերի, իրենց հասակակիցների և ուսուցիչների և ծնողների հետ առանձնահատուկ փոխհարաբերություններով: Նրանց հատուկ է խոսքի վաղ զարգացումը, զարմանք հարուցող ուշադրությունը, որը վկայում է երեխայի ծայրաստիճան հետաքրքրության մասին: Նրանք աչքի են ընկնում հիշողության մեծ ծավալով, դժվար է նրանց շփոթեցնել կամ փորձել ապակողմնորոշել: Հաճախ ինտելեկտուալ օժտվածությամբ երեխաների մտավոր զարգացման վրա շեշտադրվածությունն ու գերծանրաբեռնումը կարող է վնասել երեխայի ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը: Անշուշտ, հարկավոր է խրախուսել երեխային, հատկապես, եթե նա իսկապես օժտված է, սակայն այդ ամենը պետք է անել այնպես, որ օժտվածը, քաջատեղյակ լինելով սեփական հնարավորություններին ու տաղանդին, այնուամենայնիվ, զարգանա իր տարիքին համապատասխան՝ չխախտելով զգացմունքային, իմացական ու արժեքային համակարգի բաղադրիչների միջև օրինաչափ կապը:Պետք է միշտ հիշել, որ յուրաքանչյուր օժտվածություն պետք է զարգացնել երեխայի ընդհանուր զարգացման տեմպերին համապատասխան, ապահովել ֆիզիկական, հոգեկան և ինտելեկտուալ բաղադրիչների միջև ներդաշնակությունը:

Պետք է նշել, որ երեխայի օժտվածությունը չի վստահեցնում, որ մեր առջև ապագա տաղանդ է: Շատ երեխաներ, որոնք իրենց մտավոր կարողություններով հասակակիցներից մի քանի քայլ առաջ են, տարիների հետ կորցնում են այդ առավելություն ու հավասարվում: Ստացվում է, որ տարիներ անց նրանք՝ նախկինում տաղանդավոր երեխաները, դառնում են սովորական, շարքային հասակակիցներից ոչնչով չտարբերվող մարդիկ: Եվ միայն փորձառու մանկավարժի շնորհիվ է, որ օժտված երեխան էլ ավելի կզարգան՝ օգտագործելով իր կարողությունները և կհասնի մեծ հաջողությունների:

Իսկ ինչպես պետք է աշխատել օժտված երեխայի հետ: Ոչինչ այնպես չի սպանում ընդունակությունը, ինչպես ստանդարտ, անկյանք, միջինացված մոտեցումը, անպտուղ առաջադրանքները, անվերջ ընդհանուր աշխատանքը: Օժտվածությունը նեղ, խստորեն սահմանված շրջանակներում չի զարգանում: Որպեսզի ընդունակությունները զարգանան, պետք է մշտապես մարզել, անհատական աճի համար տարածություն է անհարժեշտ: Այս կարևոր անձնային որակների զարգացմանը նպաստում է մշտապես խնդրահարույց իրավիճակների հայտնբերումը և հաղթահարումը: Շատ արդյունավետ է, օրինակ՝ աշխատանքը փոփոխվող կազմով փոքր խմբերում, որտեղ երեխան զրուցակից, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանք ընկերների կարծիքի հետ համադրել:

Ի վերջո խմբային աշխատանքն ուսուցչին ավելի շատ հնարավորություն է տալիս տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու: Հասկանի է, որ դա դասին պատրաստվելու ավելի շատ ժամանակի ծախս է պահանջում: Այդ ծախսերն անխուսափելի են օժտված երեխաների հետ լրջորեն աշխատելու պատրաստ ուսուցչի համար:

Դասերի ժամանակ շփման բարձր մակարդակ պետք է ապահովել, օգտագործել միջառարկայական կապեր, շրջապատող իրականությունն ուսումնասիրելու համար համակարգված մոտեցում: Չէ՞ որ խնդրի մեկնաբանման ժամանակ օժտված

երեխաները ոչ ստանդարտ մոտեցումներ են ցուցաբերում, երևույթների և գործընթացների ինքնատիպ, ավելի լայն դիտարկում: Օժտված երեխաների հարցերի պատասխաններն ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք բացահայտում են ոչ ակնհայտ կապերը, գտնում են ինքնատիպ լուծումներ:

Պետք է նաև նշել, որ օժտված երեխաներն ուսուցիչների համար միանգամայն ամենօրյա դժվարություններ են առաջացնում: Օրինակ՝ նրանք հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը, ձանձրանում են մտավոր թերբեռնվածության պատճառով: Առաջադրանքները վայրկենապես կատարելով՝ տեղում անհանգիստ շարժվում են, խախտում դասի բնականոն ընթացքը: Օժտված երեխաների ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ նրանց ունակությունները սկսում են շահագործել հանուն օլիմպիադաներում ու մրցումներում հաղթանակի՝ խրախուսելով միակողմանի զբաղմունքն ու վարժանքը:

Ի դեպ, հանճարեղ մարդիկ հարյուր տարին մեկ չեն ծնվում, ինչպես ասում է թևավոր խոսքի վերածված արտահայտությունը: Իրականում նրանք ծնվում են ամեն օր: Ով փնտրում է տաղանդ, գտնում է ամենուր: Երբեմն օժտվածությունը ի հայտ է գալիս վաղ տարիքում, կարծես բնությունը ցատկեր է անում, որի ապացույցը հանճարեղ մարդկանց կենսագրական փաստերն են, որոնք ասես հանելուկային խորհուրդ ունեն:

Եզրակացություն

Այսպիսով, ուսուցումը համակարգված կրթություն ստանալու ամենակարևոր և վստահելի միջոցն է: Արտահայտելով մանկավարժական գործընթացի ամենաէական հատկանիշները (երկկողմանիությունը, ուղղվածությունը դեպի անձի ներդաշնակ զարգացումը, բովանդակային և պրոցեսուալ կողմերի ամբողջությունը), ուսուցումը միևնույն ժամանակ ունի առանձնահատուկ որակական տարբերություններ: Լինելով երեխայի գիտակցության մեջ առկա իրականության արտացոլման հատուկ կազմակերպվող բարդ և բազմակի գործընթաց՝ ուսուցումը ոչ այլ ինչ է, քան մանկավարժի կողմից ղեկավարվող ճանաչման առանձնահատուկ գործընթաց: Հենց ուսուցչի ուղղորդիչ դերն է ապահովում դպրոցականների կողմից գիտելիքների, ունակությունների և հմտությունների լիարժեք յուրացումը, նրանց մտավոր ուժերի և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Ուսուցչի գործունեությունը, որպես աշակերտների ամբողջ ուսումնական աշխատանքի ղեկավարի և կազմակերպչի, միշտ բարձր է գնահատվել առաջատար մտածողների կողմից: Ա. Դիստերվեգը գրում էր, որ «ուսուցիչը տիեզերքի համար արևն է»: Այն բարձր է գնահատվում նաև այսօր: Սակայն անհարաժեշտ է հստակ պատկերացնել հենց ուսուցչի դերը, քանի որ նա է մանկավարժական գործընթացում հիմնական և սկզբնական հարաբերությունների կենտրոնական օղակը: Ուսուցման հաջողությունը վերջին հաշվով որոշվում է ուսման հանդեպ դպրոցականների վերաբերմունքով, ճանաչելու նրանց ձգտմամբ, գիտակցաբար և ինքնուրույն գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ձեռք բերելու նրանց կարողությամբ, ակտիվությամբ:

Ուսուցչի աշխատանքի բովանդակությունն ու կազմակերպումը կարելի է ճիշտ գնահատել միայն այն դեպքում, եթե հնարավոր է որոշել իր գործունեության նկատմամբ նրա ստեղծագործական վերաբերմունքի մակարդակը: Մանկավարժի գործունեության ստեղծագործական մակարդակը արտահայտում է դրված նպատակներին հասնելու համար նրա կողմից իր հնարավորությունները կիրառելու աստիճանը: Մանկավարժական գործունեության ստեղծագործական բնույթը, այդ պատճառով,

հանդիսանում է նրա կարևորագույն առանձնահատկությունը: Բայց ի տարբերություն այլ ոլորտների, մանկավարժի ստեղծագործական հատկանիշը նպատակ չունի ստեղծել սոցիալապես արժեքավոր նորը, օրիգինալը, քանի որ նրա արդյունքը միշտ մնում է անհատի զարգացումը: Իհարկե, ստեղծագործական ձիրքով աշխատող մանկավարժը, իսկ առավել ևս մանկավարժ- նորարարը, ստեղծում է իր մանկավարժական համակարգը, սակայն այն հանդիսանում է միայն միջոց արդյունքի տվյալ պայմաններում լավագույնը ստանալու համար: Մանկավարժի անձի ստեղծագործական ներուժը ձևավորվում է նրա կողմից կուտակած սոցիալական փորձի հոգեբանամանկավարժական և առարկայական գիտելիքների, նոր գաղափարների, ունակությունների և հմտությունների հիման վրա, որոնք թույլ են տալիս գտնել և կիրառել յուրօրինակ որոշումներ, նորարարական ձևեր և մեթոդներ և դրանով իսկ կատարելագործել սեփական մասնագիտական գործառույթների իրագործումը: Յուրաքանչյուր ուսուցիչ շարունակում է իր նախորդների գործը, սակայն ստեղծագործ ուսուցիչը տեսնում է ավելի լայն և հեռու: Յուրաքանչյուր ուսուցիչ այսպես թե այնպես, վերափոխում է մանկավարժական իրականությունը, սակայն միայն ստեղծագործ ուսուցիչն է ակտիվորեն <<մարտնչում>> զգալի փոփոխությունների համար և ինքն է այդ գործում հանդես գալիս որպես վառ օրինակ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան 2004թ.

2.<<Դպիր >> ամսագիր

3. Ղույումչյան Գ. Ե. , Մանկավարժություն, բուհական դասագիրք, գիրք 1, «Զանգակ» հրատար., Երևան, 2005թ.

4. <<Մխիթար Գոշ>> գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 2013թ.

5.<<Օժտվածության երևույթի փորձարարական հետազոտություն>>, Նելլի Բրուտյան